ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-25/17» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 24 » « նոյեմբերի » 2025թ.**

ժամը 10:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ա.Սահակյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ա.Բաղդասարյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ	Տ.Մկրտչյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հարությունյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ.Զոհրաբյան
Բացակայում է Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Մ.Գևորգյան

1. Տեղեկություն «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-25/17» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գնի մասին

1.1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-25/17» ծածկագրով մրցույթի գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով:

Չ/Հ	Ապրանքի անվանումը	Չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը
1.	Անօդաչու թռչող սարք	3000 000

2. Տեղեկություն «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-25/17» ծածկագրով մրցույթի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-25/17» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2025 թվականի նոյեմբերի 24-ին, ժամը 10:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե	ՀՎՀՀ	Հեռախոսահամար
«Արմեն Սաֆարյան» Ա/Ձ	armcopters@gmail.com	85445888	055 663 134
«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ	hgh.company@mail.ru	02634261	095 909 009
«Դրոն» ՍՊԸ	info@dron.am	01072441	033 003 766

4. Տեղեկություններ գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի շահերի բախման վերաբերյալ

4.1. Գնահատող հանձնաժողովի ներկա անդամները և քարտուղարը «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-25/17» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

5. Տեղեկություններ հրավերի պահանջներին համապատասխան հայտերի էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման վերաբերյալ

5.1. «Արմեն Սաֆարյան» Ա/Ձ-ի և «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5.2. «Դրոն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան՝ Հավելված №2-ում՝ Գնային առաջարկում գնման առարկայի անվանումը չի համապատասխանում հրավերով նախատեսված գնման առարկայի անվանմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա.Սահակյան)

6.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Ա.Սահակյան)

7.1. «Արմեն Սաֆարյան» Ա/Ձ-ի և «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

7.2. «Դրոն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան՝ Հավելված №2-ում՝ Գնային առաջարկում գնման առարկայի անվանումը չի համապատասխանում հրավերով նախատեսված գնման առարկայի անվանմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Գնման առարկայի՝ անվանումը	«Արմեն Սաֆարյան» Ա/Ձ		«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ		«Դրոն» ՍՊԸ	
		Գինն առանց ԱԱՀ	գինը	Գինն առանց ԱԱՀ	գինը	Գինն առանց ԱԱՀ	գինը
1	Անօդաչու թռչող սարք	2400000	2880000	2400000	2880000	2048000	2457600

8.1. Մասնակիցների կողմից մրցույթի գնային առաջարկի ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

8.2. «Դրոն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված Հավելված №2-ում՝ Գնային առաջարկում գնման առարկայի անվանումը չի համապատասխանում հրավերով նախատեսված գնման առարկայի անվանմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Տեղեկատվություն՝ գնման առարկայի բնութագրերի օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների մասին

9.1. Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

10. Տեղեկություն «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-25/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու պահանջներին բավարարելու մասին

10.1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց ցուցակները և արձանագրել է, որ մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցները վերոնշյալ ցուցակներում ընդգրկված չեն:

11. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

11.1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-25/17» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

12. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի մասին

12.1. «Դրոն» ՍՊԸ-ի, «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Արմեն Սաֆարյան» Ա/Ձ-ի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

13. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա.Սահակյան)

13.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետը և Հրավերի 1-ին մասի 8.2 կետը՝ «Դրո» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

13.2. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը ու Հրավերի 1-ին մասի 8.6 կետը՝ հավասար գներ ներկայացրած «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ին և «Արմեն Սաֆարյան» Ա/Ձ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների՝ մինչև 30 րոպե տևողությամբ՝ յուրաքանչյուր մասնակցի նոր գնային առաջարկի ներկայացման համար տրամադրվելու է 5 րոպե ժամանակ, 2025 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը 11:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

13.3. Հանձնաժողովի քարտուղարին՝ հավասար գներ ներկայացրած «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ին և «Արմեն Սաֆարյան» Ա/Ձ-ին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

14. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Ա.Սահակյան)

14.1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-25/17» ծածկագրով մրցույթի «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Արմեն Սաֆարյան» Ա/Ձ-ի հետ միաժամանակյա բանակցությունների նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ 2025 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը 11:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

15. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) _____ Ա.Սահակյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Ա.Բաղդասարյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Տ.Մկրտչյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Հ.Հարությունյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) _____ Լ.Զոհրաբյան